ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունիսի 2020թ. թիվ 487-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ԹԻՎ 159-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. մայիսի 5-ի «Մանկական մահացության դեպքերի վերլուծության և այդ նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 710-Ա հրամանը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լոռու մարզում մանկական մահացության դեպքերն ընտրողաբար ուսումնասիրելու, մասնագիտական և կազմակերպչական թերությունները վերհանելու և դրանից բխող գործելակերպի բարելավմանն ուղղված միջոցառումներ մշակելու նպատակով ստեղծել Լոռու մարզի մանկական մահացության դեպքերի վերլուծության մշտական հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) Յուրաքանչյուր ամսվա 2-րդ տասնօրյակում քննարկել նախորդ ամսվա ընթացքում առողջապահական ընկերություններից երեխաների մահացության դեպքերի վերաբերյալ հավաքագրված տվյալները:

2) Ընտրողաբար իրականացնել մահվան առանձին դեպքերին առնչվող բժշկական փաստաթղթերի ուսումնասիրություն և մասնագիտական վերլուծություն:

3) Մահվան դեպքերի վերլուծության արդյունքում հայտնաբերված բժշկական սխալների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը 10-օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարություն:

4) Մահվան առանձին դեպքերի վերլուծության ընթացքում, ըստ անհրաժեշտության, հանձնաժողովում ներգրավել նաև տվյալ ոլորտի առաջատար այլ մասնագետներ:

5) Առանձին դեպքերում մանկական մահացության դեպքերը քննարկել տեղերում՝ ներգրավելով բուժհաստատության անձնակազմին:

3. Բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝

1) Ապահովել յուրաքանչյուր ամսվա առաջին 5-օրյակում նախորդ ամսվա ընթացքում արձանագրված 0-18 տարեկան երեխաների տնային և

հիվանդանոցային մահացության բոլոր դեպքերի վերաբերյալ անհատական տվյալների տրամադրումը ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն՝ ըստ երեխայի մահվան դեպքի հաղորդման սահմանված քարտի ձևանմուշի, ՀՀ առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վաչություն տրամադրելու համար:

2) Բուժհաստատությունում արձանագրված յուրաքանչյուր դեպք վերլուծել տեղում և քննարկել բուժանձնակազմի հետ՝ ներգրավելով մարզի գլխավոր մանկաբույժին և տարածաշրջանային պատասխանատու մանկաբույժներին: Յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 5 օրերի ընթացքում մահվան դեպքերի քննարկման արդյունքները համապատասխան եզրահանգմամբ և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությամբ ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի վրա:

5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի մայիսի 27-ի «Մանկական մահացության դեպքերի վերլուծության մշտական հանձնաժողով ստեղծելու և ՀՀ Լոռու մարզպետի 2010 թվականի մայիսի 21-ի թիվ 108-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 159-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

30/06/20

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 30
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հունիսի 30-ի
թիվ 487-Ա որոշման

Կ Ա Զ Մ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա. Գուլանյան - հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Մ.Ղազարյան - հանձնաժողովի քարտուղար, «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի փոխտնօրեն, Գուգարքի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

Հանձնաժողովի անդամներ.

Ի.Անտոնյան - Լոռու մարզի գլխավոր մանկաբույժ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ

Լ.Կարակեշիշյան - «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքի նեոնատոլոգ, Լոռու մարզի գլխավոր նեոնատոլոգ

Ն.Սարգսյան - «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Սպիտակի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

Ա.Ղալայան - «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Թումանյանի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

Ն.Պետրոսյան - «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Տաշիրի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

Ն.Սուքիասյան - «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Ստեփանավանի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերությունների տնօրեններ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ